ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

ՈՐՈՇՈՒՄ

թիվ 1254 -Ն

ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅՈՒՆՈՒՄ ՌՈՏԱՑԻԱՅԻ ԵՆԹԱԿԱ ԾԱՌԱՅՈՂՆԵՐԻ ՑԱՆԿԸ ԵՎ ՌՈՏԱՑԻԱՅԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԿԱՐԳԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

«Ոստիկանությունում ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 2-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ պարբերության համաձայն՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը *որոշում է.*

1. Սահմանել ոստիկանությունում ռոտացիայի ենթակա ծառայողների ցանկը և ռոտացիայի իրականացման կարգը՝ համաձայն հավելվածի:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող օրը:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏ *Տ. ՍԱՐԳՍՅԱՆ*

« 06 « նոյեմբերի 2009թ.

rotacia

Հավելված

Հայաստանի Հանրապետության
կառավարության 2009 թվականի
նոյեմբերի 6-ի թիվ 1254 -Ն որոշման

ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅՈՒՆՈՒՄ ՌՈՏԱՑԻԱՅԻ ԵՆԹԱԿԱ ԾԱՌԱՅՈՂՆԵՐԻ ՑԱՆԿԸ ԵՎ ՌՈՏԱՑԻԱՅԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԿԱՐԳԸ

1. Սույն հավելվածով սահմանվում են Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր Հայաստանի Հանրապետության ոստիկանությունում (այսուհետ՝ ոստիկանություն) ռոտացիայի ենթակա ծառայողների ցանկը և ռոտացիայի իրականացման կարգը:

2. Ռոտացիայի են ենթակա՝

1) անձնագրային և վիզաների վարչության անձնագրային բաժանմունքի պետի պաշտոն զբաղեցնող ծառայողները.

2) անձնագրային և վիզաների վարչության անձնագրային խմբի ավագ տեսուչի պաշտոն զբաղեցնող ծառայողները:

3. Սույն հավելվածի 2-րդ կետում նշված ոստիկանության ծառայողների ծառայությունը կազմակերպվում է ռոտացիայի սկզբունքով՝ ոստիկանությունում համապատասխանաբար իրար հաջորդող եռամյա ծառայության փուլերով:

4. Ոստիկանության ծառայողի ռոտացիան իրականացվում է Հայաստանի Հանրապետության ոստիկանության պետի հրամանով:

5. Ոստիկանության պետը ոստիկանության ծառայողների ռոտացիա իրականացնելու մասին որոշումն ընդունում է ռոտացիա իրականացնելուց առնվազն մեկ շաբաթ առաջ:

6. Սույն հավելվածի 3-րդ կետով նախատեսված եռամյա ծառայության առաջին փուլի ժամկետը սկսվում է ՀՀ կառավարության 2009 թվականի նոյեմբերի 6-ի «Ոստիկանությունում ռոտացիայի ենթակա ծառայողների ցանկը և ռոտացիայի իրականացման կարգը սահմանելու մասին» թիվ 1254-Ն որոշումն ուժի մեջ մտնելուն հաջորդող ամսվա 1-ից:

rotacia